600.0305.09.09.20

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 սեպտեմբերի 2020 թվականի №305Ա

ք. Երևան

## «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և «Ռեդի Սթեդի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2020 թվականի հուլիսի 1-ին կնքվել է «Սննդի մատուցման ծառայությունների» №04/23 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր),

բ) Պայմանագրի 1.1 կետով «Ռեդի Սթեդի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավորվել է Ընկերության առաջադրանքով մատուցել Պայմանագրին կից և դրա անբաժանելի մասը հանդիսացող հավելված 1-ով սահմանված բնութագրին համապատասխան ծառայություններ Ընկերության ճաշարանի տարածքում,

գ) Պայմանագրի 1.2 կետով Ընկերությունը պարտավորվել է սննդի մատուցման ծառայությունների մատուցման կազմակերպման նպատակով «Ռեդի Սթեդի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել գույք,

դ) Պայմանագրի անբաժանելի մաս համարվող հավելված N1-ի «Ծառայությունների բնութագիր» մասով «Ռեդի Սթեդի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավորվել է Ընկերության աշխատողների և հյուրերի համար Պայմանագրում նշված հասցեում կազմակերպել սննդի պատրաստման և մատուցման ծառայություններ, իսկ Ընկերությունը պարտավորվել է «Ռեդի Սթեդի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել ծառայությունների պատշաճ մատուցման համար անհրաժեշտ տարածք և սարքավորումներ,

ե) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում լիցենզիա ունեցող անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման, ինչպես նաև լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համաձայնեցման կարգի (այսուհետ՝ Կարգ) 3-րդ կետի պահանջի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2020 թվականի օգոստոսի 13-ի №ԳԲ/34.1-Մ2-3/3449-2020 գրությամբ,

զ) Հանձնաժողով ներկայացված 2020 թվականի օգոստոսի 27-ի №Է/35/1551-20 գրությամբ Ընկերությունը պնդել է, որ Պայմանագիրը չի ենթադրում ճաշարանի շենքի նկատմամբ իրավունքի որևէ ձևով օտարում, և դրա հիման վրա «Ռեդի Սթեդի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվելու է միայն ճաշարանում գտնվող շարժական գույքը,

է) «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համար լիցենզավորված անձը պարտավոր է նախապես ստանալ հանձնաժողովի համաձայնությունը,

ը) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, քանի որ Պայմանագրի ու դրա անբաժանելի մաս կազմող հավելվածի բովանդակությունից բխում է, որ Պայմանագրով կարգավորվել է նաև սննդի պատրաստման և մատուցման ծառայությունների համար անհրաժեշտ տարածքի՝ ճաշարանի փոխանցման հարցը, որը կոչված է ապահովելու «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի կողմից նշված ծառայությունների մատուցման համար համապատասխան

տարածքային պայմանների ստեղծումը, և Ընկերությունը՝ որպես լիցենզավորված գործունեություն իրականացնող սուբյեկտ, անկախ պայմանագրային ձևից, ճաշարանը փոխանցելուց առաջ պարտավոր էր նախապես ստանալ հանձնաժողովի համաձայնությունը, որը չի արվել,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝

   1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված գործընթացների շրջանակում վերացնել թույլ տրված խախտումը,

   2) ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
09 սեպտեմբերի 2020թ.